ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի ապրիլի 16-ից 22-ը Գերմանիայի դաշնային հանրապետություն (ք. Հաննովեր) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Արսեն Ղարիբյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (Այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) Տեղեկատվական տեխնոլոգիաների (Այսուհետ՝ SS) վարչության տեղեկատվության փոխանակման և կառավարման բաժնի պետ

Անի Սարիբեկյան, ՀՀ ՊԵԿ SS վարչության նախագծերի իրականացման բաժնի SS պատասխանատու

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Գերմանիայի դաշնային հանրապետություն, ք.Հաննովեր, ապրիլ 16-ից 22-ը

3. Հրավիրող կողմը՝

Deutsche Messe (HANNOVER MESSE 2023 բարձր տեխնոլոգիական միջոցառմանը մասնակցելու նպատակով, Թեքվեյ ընկերության միջնորդությամբ)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Բարձր տեխնոլոգիաների որոտում կայացած նոր տեխնոլոգիական լուծումներին ծանոթանալու և դրանց կիրառությունը ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգերում կիրառելու նպատակով ՀՀ ՊԵԿ SS վարչության աշխատակիցները ներկա են գտնվել Հաննովեր Մեսսե 2023 բարձր միջոցառմանը:

Միջոցառման ընթացում անհրաժեշտ էր ուսումնասիրել համաշխարհային փորձը, AI/ML տեխնոլոգիաների կիրառությունը տեխնոլոգիական համակարգերում և դրանց զարգացումը ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգերում:

Միջոցառման ընթացքում ուսումնասիրվել է բարձր տեխնոլոգիաների նորարարությունները և դրանց կիրառության շրջանակներն ու հնարավորությունները ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգերում:

5. Քննարկված թեմաները՝

Microsoft ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է POWER BI համակարգի կիրառությունը և հաշվետվողականությունը կազմակերպությունների վաճառքի կառավարման գործընթացում:

Google ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ներկայացվել է Google Cloud տեխնոլոգիաների կիրառումը կիբեռ հանցագործության (Cyber Security) մեջ և հավաքագրվող տվյալները ամպային տիրույթներում, պահպանման և կիրառման մոտեցումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հաննովեր քաղաքում հանդիպումներ են տեղի ունեցել Գերմանիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Վիկտոր Ենգիբարյանի, ինչպես նաև Հաննովեր Մեսսե բարձր տեխնոլոգիական միջոցառման կազմակերպիչների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Տվյալ միջոցառումների շրջանակը չէր նախատեսում պայմանավորվածությունների ձեռքբերում կամ փաստաթղթերի ստորագրում:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառման ընթացքում ներկայացված շատ արտադրանքներ հիմնված էին AI/ML տեխնոլոգիաների կիրառմամբ և ակնհայտորեն ամբողջ աշխարհը շարժվում է այդ ուղղությամբ: ՀՀ ՊԵԿ-ում նույնպես կիրառվում են նմանատիպ տեխնոլոգիաներով տվյալների վերլուծություններ, որոնց հիման վրա հնարավոր է իրականացնել ապագա կանխատեսումներ: Առաջարկվում է նման տեխնոլոգիաների կիրառության շրջանակը ընդլայնել ՀՀ ՊԵԿ-ում՝ առկա տեխնոլոգիական

մարտահրավերներին համահունչ տեղեկատվական համակարգեր ունենալու նպատակով:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

25.04.2023թ.